Ղարաբաղյան հակամարտություն. իշխանության կռվան, թե՞ գիտակցված խնդիր, որ լուծում է պահանջում

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Մոտենում են նախագահական ընտրությունները թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում: 2008-ի մասին խոսելիս քաղաքական գործիչներն ամեն անգամ չեն ծուլանում ավելացնել «ընտրությունների տարի» բնորոշիչը: Փաստ է, որ ընտրությունների արդյունքները պայմանավորելու են հետագա զարգացումները բոլոր ոլորտներում: Հակամարտության ոլորտը թերևս այն միակն է, որտեղ վերջնանպատակը, այսինքն՝ դրա կարգավորումն, այնպիսի կենսական անհրաժեշտություն է, որ թվում է, թե անկախ ընտրական արդյունքներից, հակամարտության լուծումը պետք է շարունակի մնալ նորընտիր իշխանությունների տեսլականի առանցքային սյուներից մեկը: Այդպե՞ս է արդյոք:

Հակամարտությունը՝ խճճված պետական, քաղաքական և հասարակական հարաբերությունների հորձանուտում

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարելի է դիտարկել երեք հարթություններում.

1. պետական,
2. քաղաքական,
3. հասարակական կապեր և հարաբերություններ:

Դիտարկելով այս հակամարտությունը պետական մակարդակում՝ պետք է փորձել պատասխանել մի հարցի. արդյո՞ք այս խնդիրը և դրա լուծման տարբերակներն ածանցվում են իշխանության պահպանման, թե՞ ազգային շահից: Ավելի քան տաս տարի հակամարտող պետությունները ջանքեր են գործադրում՝ խորքային, թե ձևական, կառուցելու գործող ժողովրդավարություն: Թե՛ Ադրբեջանում, թե՛ Հայաստանում իշխանափոխության մշակույթ և ինստիտուտ, որպես այդպիսին, դեռևս գոյություն չունի: Երկու պետություններում էլ իշխանությունների վերարտադրման բնազդը երբեմն շատ ավելի ուժեղ է եղել, քան նվիրվածությունը ժողովրդավարական գաղափարախոսությանը, ինչը կարելի է ազգային շահի բնութագրիչ համարել գոնե Հայաստանում: Ի՞նչ է ասելու 2008-ը:

Քաղաքական դաշտում Ղարաբաղյան հակամարտությունը շարունակում է մնալ շահարկման առարկա: Հակամարտող պետություններում քաղաքական ծրագրերն ու գաղափարախոսություններն ուղղակիորեն կառուցվում են ընտրազանգվածի կողմից խնդրի և հնարավոր կարգավորման ընկալման վերաբերյալ հավանական արձագանքների կանխատեսման հիման վրա: Իսկ երբ այդ ընտրազանգվածի զգալի մասի մարմինը դեռևս նվվում է պատերազմի վերքերից, կանխատեսումներ անելը բարդ է…

Հասարակական հարաբերությունները նկարագրելիս կարելի է նույնիսկ անուն առ անուն թվարկել այն միջոցառումները, որտեղ հայերն ու ադրբեջանցիները հանդիպել են միմյանց, այնքան սակավաթիվ են դրանք: Հասարակական կապերը սովորաբար սահմանափակվում են երրորդ երկրում կազմակերպված համաժողովներով ու հանդիպումներով, որտեղ որպես կանոն, վերջերս հանդիպում են միշտ միևնույն դեմքերը: Անձնական շփումների հաճախակիությունը հետզհետե խլացնում է սուր խնդիրների առկայությունը, մինչդեռ դրանք ոչ մի տեղ չեն անհետացել: Պահպանելով գործող ձևաչափերը՝ արդեն հրատապ է դառնում նորերի կիրառումը:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Հակամարտության սուր անկյունները բազմաթիվ են, և ապահովելով շփումների քանակական և որակական բազմազանությունը՝ թերևս կարելի է նպաստել եթե ոչ դրանց հարթեցմանը, ապա գոնե կողմերի փոխադարձ ընկալմանը:

Պատասխան՝ հաջորդ հարցերում

Հնարավոր է արդյո՞ք քաղաքական կամքի և իշխանական նկրտումների համատեղելիություն: Հնարավո՞ր է հրաժարում թշնամու կերպարից: Նույնիսկ «այոն» բավական չի այստեղ, քանզի այն ենթադրում է ձախողումներ, պարտություններ, փոքրիկ հաղթանակներ և անխոջ աշխատանք՝ հետևողական, նվիրված: Հնարավո՞ր է ցատկել գլխից վերև…

Ճանապարհները դեպի այս հարցերի պատասխանները կհանգեցնեն այն հարցի պատասխանին, թե պատրա՞ստ են արդյոք երկու երկրների նորընտիր իշխանությունները հետ կանգնել խնդրի շահարկման գայթակղությունից: Եթե ոչ, ներկա միտումները ոչինչ հուսադրող չեն խոստանում…

Համառոտագիրը մշակվել է ՄՀՄԿ 2007թ-ի հոկտեմբերի 12-ին կայացած՝ «Հայ-ադրբեջանական հարաբերություններ. նախընտրական տարվա գործոնը» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի աջակցությամբ: